ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 785 -Ա **05 դեկտեմբերի 2024 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 12-րդ հոդվածի, <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 4-ի N ԴԽ /15.2/ 39333-2024 գրությունը և ՀՀ վիճակագրական կոմիտեի <<ԱՐՄՍՏԱՏ>> վիճակագրական աշխատանքների ծրագիրը,

որոշում եմ՝

1. 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ Գեղարքունիքի մարզի տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասունների համատարած հաշվառումը կազմակերպելու և իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի N 1-ի:
2. Գեղարքունիքի մարզի համայնքներում անասունների համատարած հաշվառումը կազմակերպելու համար Մարզպետի աշխատակազմից նշանակել պատասխանատուներ ըստ մարզի համայնքների՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Հանձնաժողովին՝ մարզի տարածաշրջաններում անասունների գլխաքանակի հաշվառման աշխատանքներն իրականացնել 2025 թվականի հունվարի 1-ից- 17-ը:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Վահան Զարոյանին:

05.12.2024

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի դեկտեմբերի 5 -ի
N 785-Ա որոշման

ԿԱԶՄ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Պետրոսյան Մարտին - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և ՇՄՊ վարչության պետ, նախագահ

Բաղալյան Հակոբ - ՀՀ վիճակագրական կոմիտեի Գեղարքունիքի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/

Մելքոնյան Սպարտակ - ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Գեղարքունիքի մարզային կենտրոնի պետ /համաձայնությամբ/

Առորոգրված
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
22016500098
2024-12-05 12:50:05 GMT+
Հաստատված է էԿԵՏ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի դեկտեմբերի 5 -ի
N 785-Ա որոշման

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ՝ ԸՍՏ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

Պետրոսյան Մարտին - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և ՇՄՊ վարչության պետ, Ճամբարակ և Սևան համայնքներ

Ջրաղացպանյան Անդրանիկ - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և ՇՄՊ վարչության գլխավոր մասնագետ, Վարդենիս համայնք

Զանգեզուրյան Դավիթ - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և ՇՄՊ վարչության գլխավոր մասնագետ, Գավառ և Մարտունի համայնքներ

Շահբազյան Կարինե - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և ՇՄՊ վարչության ավագ մասնագետ, Գավառ և Մարտունի համայնքներ

Էլեկտրոնային ստորագրություն
ՍԵՍԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
22016500098
2024-12-05 05:00 GMT+4
Հավաստագրի համարը՝ 0848824

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ